2021-2022 ուսումնական տարի
Դասղեկի տարեկան
աշխատանքային ծրագիր

Դպրոց՝ «Երևանի N 144 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

Դասարան՝ 7-րդ

Դասղեկ՝ Հ.Հակոբյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Դասարանի ընդհանուր բնութագիրը	Դասարանը բաղկացած է 24 աշակերտներից՝17 տղա,7 աղջիկ:Աշակերտները ունեն միջին ընդունակություններ:Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են:Կոնֆլիկտային իրավիճակներ քիչ են լինում:Դասարանում պահպանվում է բարոյահոգեբանական մթնոլորտ:
Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում	Հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները՝ժամանակ առ ժամանակ վարել բարոյահոգեբանական և վարքին առնչվող զրույցներ:Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ հատուկ ուշադրություն և հոգատարություն ցուցաբերելու պատրաստակամություն սերմանել:
Հոգևոր դաստիարակություն	Աշակերտների բարոյական դաստրարակությունը և հոգևոր աշխարհի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է նրանց պատկերացում տալ ազգային մշակույթի,ժողովրդական արժեքների,տարբեր ծիսակատարությունների,տոների և հանդիսությունների մասին:
Գեղագիտական դաստիարակություն	Դա մարդկանց զարգացվածության ընդհանուր և զգալի մասն է:Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ,մարդ-բնություն կապը:Հաճախակի կազմակերպել այց թանգարաններ,պատկերասրահներ և բնության գիրկ:
Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն	Գրագետ, հոգեպես և ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում ավելի է կատարելագործվում և կարևորվում:
Ֆիզիկական դաստիարակություն	Ազգային դպրոցի ֆիզիկական դաստիարակությունը,որպես ընդհանուր դաստիարակության ընդհանուր մաս,նպատակաուղղված է անձի բազմակողմանի զարգացմանը,ֆիզիկական կատարելագործմանը և կենցաղում առողջ ապրելակերպի դրսեվորմանը:

Աշխատանքային դաստիարակություն	Կատարելով գլխավորապես հասարակական աշխատանք,աշխատանքային դաստիարակության այս կամ այն ձևով,գոյություն է ունեցել բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում:
Բնապահպանական դաստիարակություն	Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա:
Դպրոց-ընտանիք կապը	Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում,աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն:Այդ ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը,այնպես էլ դպրոցում:

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը
1.	Նոր ուստարվա անելիքների ծրագրում: Ինչպե՞ս սովորել և աշխատել համավարակի պայմաններում:
2.	Մարմնակրթություն, առողջապահություն: Հիգիենիկ հարցեր:
3.	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու:
4.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
5.	Խաղաղության մշակույթ:
6.	Հանդուրժողականության սահմանում:
7.	Անհանդուրժողականության դրսևորումները
8.	Ներողամտություն,թե վրեժխնդրություն
9.	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
10.	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11.	Ինչպե՞ս նայել ճշմարտության աչքերին:
12.	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
13.	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ:
14.	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:
15.	Հայոց բանակ:
16.	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:
17.	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը:

18.	Ո՞վ է իսկական ընկերը:
19.	Ո՞վ է իմ իդեալը:
20.	Ի՞նչ եմ ուզում դառնալ:
21.	Իմ կարողություններն ու ձեռքբերումները:
22.	Դառն է ճշմարտությունը:
22.	Ինչպե՞ս ապացուցել քո ճշմարտացիությունը:
23.	Ի՞նչ է պատասխանատվության զգացումը:
24.	Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ:
25.	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
26.	Սերը որպես տիեզերական զգացմունք:
27.	Վատ սովորույթներ:Ինչպես պայքարել դրանց դեմ:
28.	Իմ կատարած ոչ ճիշտ գործերը:
29.	Իմ կատարած լավ գործերը:
30.	Հիշում ենք և պահանջում:Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31.	Հաղթանակների ամիս մայիս:
32.	Իմ երկիրը երեկ,այսօր,վաղը:
33.	Ոչ ոք չի մոռացվել:
34.	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում:

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Նախագահ	Գոհար Ստեփանյան	
Անդամներ	Ջուլիետա Մխիթարյան Լիլիթ Զաքուսովա Անուշ-Տեր Հակոբյան	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը
Սեպտեմբեր	Նոր ուստարվա անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս է կազմակերպել դասընթացները համավարակի պայմաններում:
Դեկտեմբեր	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը
Հունվար	II կիսամյակի անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս միասին կազմակերպել II կիսամյակի անելիքների
Մայիս	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը,առաջադիմությանը